1 Եսաւ պատկեր Հրեից է ճեաղ.
Ուստի Փրրկչին մեր է ցե ղեաղ.

2 Սա ընդ Յակօբ օրինա կեաղ.
Որ ըզգեստիւք եղբօրն օրհ նեաղ.

3 Եսաւ երէցն խոստան գը տեաղ.
Զի զօրհնութիւն հօրն չընկա լեաղ.

4 Սապէս Հրեայքն անդրանկա ցեաղ.
Փրրկչին շնորհացն բայց ու հա սեաղ.



5 Փրրկչին ընդ Մօր օրհնաբա նեաղ.
Ի Յակօբայ շառաւի ղեաղ.

# ՀԱՄՕՐԷՆ, ԵՒ
## ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՌԱՆՁԻՆ ԱՐԱ-
## ՄԵԱՆՑ ՏՈՀՄԻՆ ԵՐԻՑՍ
### ԵՐԱՆԵԱԼ ՀՈՎՈՒԱՊԵՏԱՑ, ԵՌԱՓԱՅԼԵ-

պսակաւորաց, Շնորհազարդ Վարդապետաց, երկնա-հրաւէր Քահանայից, ազնուամիտ Իշխանաց, պերճապատիւ Դով-լաթաւորաց, բարեպաշտ Վաճառականաց, խնամոտ Արհեստաւ-որաց, և առհասարակ ամ 'ի Քն հաւատացեալ Լուսաւորչական Հօտին, և Հոտապետացն. մեծամեծաց՝ և փոքունց, 'ի Մայրաքա-ղաքս՝ և 'ի Գիւղաքաղաքս, կամ յ'այլուրեք բնակելոցն. Ամենե-ցուն միահաղոյն, որք զայս յորդորական Թուղթս ընթեռնուն, կամ զորին ընթեռնուլ լսեն.

Ողջոյն, և Սէր Քսաւանդ, Խաղա-ղութիւն յԱյ Հօրէ մերմէ.

ըստ իւրաքանչիւրոյ հասակի, աստիճանի, և դասու:

# ԱՆԵՐԿԲԱՅ ԻՄԱՆ Է՛ ՑԱ-
## ՄԵՆԵՑՆ ՈՒՐԵՔ ԳՈՅ ՏԷՐՈՒ-
### ԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ. ՈՒՐԵՄՆ ԵՒ-

յամ տեղիս արժան իսկ է կալ յաղօթս առ Տէր հոգւով և ճշմարտութեամբ. զոր ձեռս 'ի վեր բառնալով առանց երկմտու-թե՛. 1 Տիմ. 2. 8. Բայց՝ ամ 'ի Հնումն անտեղի իմն էր՝ զոհս մատուցանել արտաքոյ Տաճարին Երուսաղէմի. Նոյնպէս և 'ի Նոր-ումս անարժան իմն է արտաքոյ Սբ Եկեղեցւոյն մատուցանել զԱմե-նասուրբ Պատարագն. որ է Ընդհանրական, Քաւարար՝ Հաշ-

տու

տարար, և Խաղաղարար պաշտօն առ Աստուած։

Գրէ Սբն Կիւրեղ Աղեքսանդրացին. Պատարագն՝ զոր խորհրդաբար հաշակեմք՝ պարտ է զի մատուսցի միայն 'ի սբ Եկեղեցիս Ուղղափառաց, և ոչ ամենևին յայլուրեք. որք այլազգս առնեն՝ յայտնապէս խախտեն զօրէնս։ ՍՈՐԻՆ՝ հարկ է սակս որ Պատարագին ունիլ զառանձին, և զհանդիսական տեղի. ուր Հաւատացեալքն անդամանդամ 'ի մի վայր ժողովեալ՝ միաբան համերգ Քահանայիւ կատարիցեն զփրկարար խորհուրդ որ Պատարագին առ 'ի քաւութիւն մեղաց համօրէն Հաւատացելոյն։ Աստ որում բարեպաշտաւէր, հարազատամիտ՝ և բազում գովութեանց արժանի ազգս մեր Հայոց յամ տեղիս՝ ուր բնակին կամ յածախեն, ունին միշտ ինքեանց առանձին պաշտառատեսիլ եկեղեցիս 'ի պատիւ Սբ Պատարագին. Նոյնպէս և աստ յ'այսմ Ամստրդամ քաղաքի յառաջն զտան վէց ամ մերազնեայքս ինքնայօժար կամօք կամեցան շինել ինքեանց հասարակաց եկեղեցի. բայց յ'այլևայլ պատճառէ, և պատահմանէ մինչև ցայսօր յառաջերդեալ գործն յետացաւ։

ԱՍՏԱՆՕՐ մեք աստ 'ի մեծագոյն, և համբաւահռչակ Ամստրդամ քաղաքի եղեալ Հայքս՝ ըստ բարեհաճութեան Հոգւոյն Սրբոյ, որով եմք՝ կեամք և շարժիմք յածախեալ՝ և բազմացեալ՝ համախոհ հաճութեամբ բարւոք վարկաք կանգնել՝ և արձանացուցանել յ'այսմ ծովապարփակ, և հարստավաճառ քաղաքումս զառանձին, և հասարակաց Եկեղեցի 'ի փառս Ամենաբ Երրորդութեան, 'ի պարծանս Լուսաւորչին Սբ Աթոռոյն՝, և 'ի հոգեշահ պայծառութիւն Լուսաւորչադաւան Հօտին 'ի մէջ այսքան չքնաղանուն ազգաց, որք են աստ յ'այսմ քաղաքի. ևս 'ի մէջ ծայրածաւալ վաճառատեղեաց, ընդ որս ունիմք յամուրեք երթևեկութիւնս։

Այսու դիտաւորութեամբ աստ եղեալ Արամազնեայ սակաւաթիւ վաճառականքս ինքնայօժար կամօք 'ի մէջ եդաք աւելի քան զեօթն հազար գուլդիս, և հրամանաւ մեծազօր իշխանացն քաղաքիս ըսկիզբն արարեալ՝ ձեռնարկաք շինել զվաղեմեայ փափագեալ Եկեղեցին՝ զարդարուն իբրև զՀարսն Լուսոյ։

ԱՐԴ· ազնուապատիւ և բարգաւաճեալ Տեարք՝ սիրելի և համազնեայ եղբարք, որք ընդ մեզ ընկալեալ էք զծնութիւն Հոգւոյն Սբոյ՝ ոմ ազգայինք մեր՝ և համակարիք, արդիւնաւոր ձեռնտուութեամբ, և զօրաւոր հաղորդութեամբ լերուք ընդ մեզ հաղորդ՝ և կցորդ այսմ Ածահաճելւոյ Եկեղեցաշինութեան գործոյս. որով և դուք ար

գինո

դիւնորէն հաղորդ՝ և կցորդ լինիցիք հոգևոր բարեացն, որք աստ կատարին։ Քանզի ասէ Փրկիչն համուրց. Տուք, և տացի ձեզ. չափ բարւոք՝ թաթաղուն՝ շարժուն՝ և զեղուն տային ՚ի գոգս ձեր. նովին չափով՝ որով չափէք՝ չափեսցի ձեզ։ Ղուկաս 6. 38։ Եւ որպէս յ՚ի գործ խորանի Վ̃կայութեան իւրաքանչիւրոք բերէր հաս՝ և պտուղ ըստ կարի՝ և յօժարութե̃ սրտի. իւրոյ. հարուստքն զակունս պատուականս՝ ոսկի՝ և արծաթ. Այլքն պղինձ՝ փայտ՝ թել՝ մորթի՝ մազ՝ իւղ՝ և խունկ։ Ելից 35. 23։ Սապէս ևս հարազատամիտ բարեպաշտութի̃ ձեր ը̃ կարի՝ և յօժարութե̃ սրտի ձերոյ ը̃ մեզ ձեռնտու լերո՛ւք՝ զի հաստատեսցի աստ Եկեղեցի մի՝ իբրև Հարսն Ք̃ի ՚ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ՝ և պաճուճեալ. ՚ի մխիթարութիւն աստ գտեալ մերազնեայ ժողովրդեանս։

Ե. ՐԳ՝ ովք յօժարակամ սրտիւ ը̃ այս դիտաւորութիւն բոլորապտուղ նուէր ինչ կամիցի մատուցանել առ ՚ի գտանել զպատուական մարգարիտն. և զՔ̃Ս անձին իւրում բարեկամ առնել՝ գրեսցէ զանուն իւր, և զքանիս որոցն, և առաքեսցէ այսր յԱմստրդամ ՚ի ձեռս Մուլթանումի որդի Բաբաջանին, և Թէոդորոսի որդի Նիկողոսին. որք զանուանս, և զնուէրս Պտղաբերացն գրեսցեն ՚ի Սնտակի յանմահ յիշատակ պտղաբերացն։

Ք. Ր. Ն. Օ. Ր աստ եղեալ Հայկազնեայ ժողովրդեան հաւասար հաճանութեամբն, և միաբան հաճութեամբն վերոգրեալ Բաբաջանին՝ և Նիկողոսին կարգեալ հաստատեցան Հոգաբարձուք՝ Վերակացուք՝ և Գործակալք այս Եկեղեցաշինութեանս. որք և զայս յորդորկան՝ և հրաւիրական թուղթս հաւանութ̃ աստ եղեալ մերազնեայ անուանի վաճառականացն Ձեր Բարեպաշտութեդ յանդիման կացուցանեն. Ողջ լերուք։

—

յԱմստրդամ. յԱմի Տն 1714։
Թուին մեր 1163. Յունվար 1։

Վաճառականն մամոնայ — լին.
Երբ է խոհեմ ըստ վաճա — ռին.
զաւազն փոխէ ընդ մարգար — տին.
ըղձ շարժելին ընդ անշար — ժին։